ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«14» նոյեմբերի 2014 թվականի N 159 –Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀԻ ՓՈՂՈՑ N 1/6 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 27-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14^3-րդ հոդվածի 9-րդ և 12-րդ մասերով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի օգոստոսի 8-ի «Հողամասը հետ վերցնելու, հողամասի փոխանակման, որպես նվիրատվության գույք ընդունելու, Գյումրու քաղաքային համայնքին գույք նվիրաբերելու և «Գյումրու պաթոլոգոանատոմիական լաբորատորիա» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալն ավելացնելու մասին» N 927-Ա որոշման 4-րդ կետը՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Փոփոխել քաղաքացիներ Ռուբիկ և Ձյունիկ Գասպարյաններին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 07102013-08-0012) Գյումրի քաղաքի Գարեգին Նժդեհի փողոց N 1/6 հասցեում գտնվող 0,12 (զրո ամբողջ տասներկու հարյուրերորդական) հեկտար մակերեսով հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրության հողերի արդյունաբերական օբյեկտների հողը փոխադրել բնակավայրերի հողերի հասարակական կառուցապատման հողի կատեգորիա:
2. Սույն որոշման 1-ին կետով հողամասի նպատակային և գործառական նշանակության փոփոխման մասին 10(տաս)-օրյա ժամկետում, օրենսդրությամբ սահմանված կարգով տեղեկացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեին և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարությանը:

Կողմ (19)	**Դեմ (0)**	**Ձեռնպահ(0)**
Ա. Ադամյան _____		
Գ. Ադամյան _____		
Ա. Բաղեյան _____		
Ա. Բաղրամյան _____		

Լ.Բարսեղյան _____

Մ. Գաբոյան _____

Ա.Գրիգորյան _____

Վ.Եդիգարյան _____

Գ.Թաթարյան _____

Հ. Խաչատրյան _____

Հ. Կարապետյան _____

Տ.Հովհաննիսյան _____

Վ. Հունանյան _____

Ն. Մեսրոպյան _____

Ռ.Մխիթարյան _____

Է. Մկրտչյան _____

Վ.Շիրինյան _____

Մ. Սահակյան _____

Տ. Փանոսյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

ք.Գյումրի
«14» նոյեմբերի 2014 թ.